

**ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ**

Յուրաքանչյուր լեզվական միավոր կազմավորվելուց հետո սկսում է ապրել զարգացման գործընթաց: Այդ գործընթացում մեծ դեր է խաղում լեզվի ընդհանուր համակարգը, ինչը լրիվ չափով վերաբերում է նաև դարձվածաբանությանը: Ահա թե ինչու վերլուծական լեզուների քերականական կառուցվածքը ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում դարձվածքների զարգացման համար, հատկապես ընդլայնելով նրանց դիպվածային փոխակերպումների հնարավորությունները:

Դարձվածքները վերլուծական են իրենց զարգացման մեջ, դրանք քարացած միավորներ չեն: Ինչպես և լեզուն ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր ոլորտ անընդհատ զարգացման մեջ է:

Վերլուծական միավոր լինելով ըստ ծագումի՝ դարձվածքը զարգանում է տվյալ լեզվի ընձեռած հնարավորությունների համաձայն:

Ֆրանսերենի քերականական կառուցվածքը հնարավորություն է տալիս դարձվածքներին վառ կերպով դրսևորել իրենց վերլուծական միտումները, որոնք իրենց արտահայտությունը գտնում են հատկապես դիպվածային փոխակերպումների մեջ:

Դեռ վաղուց լեզվաբանների ուշադրությանն է արժանացել այն փաստը, որ բոլոր հնարավոր բառաքերականական փոխակերպումները, որոնց ենթարկվում են դարձվածային միավորները խոսքում, ամենևին չեն ազդում նրանց իմաստային ամբողջականության վրա: Այստեղից արվել է այն հետևությունը, որ դարձվածային միավորի կառուցվածքային կայունությունը ունի հարաբերական բնույթ: Խոսելով այն մասին, որ միայն արտաքին (կառուցվածքային) հատկանիշները դեռ բավարար չեն դարձվածային կապակցության սահմանման համար, Շ. Բալլին, դրա հետ մեկտեղ, նշում է նաև ժամանակին գոյություն ունեցող

այն սխալ պատկերացումը, ըստ որի դարձվածային միավորը խիստ կայուն բառաքերականական կառուցվածքով բառակապակցություն է:

Ասվածը հաստատվում է ֆրանսերեն լեզվում դարձվածքների բազմազան դիպվածային փոխակերպումների առկայությամբ: Նման փոխակերպումների համար նախադրյալ է հանդիսանում դարձվածային միավորի բաժանելիությունը (տարածակալորվածությունը), ինչը թույլ է տալիս դրանք համարել դարձվածաբանությանը բնորոշ երևույթ:

Դարձվածքների դիպվածային փոխակերպումների թվին են պատկանում դրանք խոսքային, բառաքերականական փոխակերպումները, որոնք կրում են անհատական (անհատական-հեղինակային) բնույթ, բայց, որոնք չեն խախտում այդ միավորի իմաստային նույնությունը¹:

Դարձվածքների դիպվածային փոխակերպումների հիմնական նպատակը ոճական որոշակի ներգործություն ստեղծելն է, այդ իսկ պատճառով դրանք դարձվածաբանական ոճագիտության ուսումնասիրության առարկան են հանդիսանում և քննարկվում են այն բաժիններում, որոնք նվիրված են դարձվածքների ոճական առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Սակայն, հարկ է նշել, որ նշված փոխակերպումներում մեծ դեր ունեն իմաստային գործոնները: Սրանով է բացատրվում այն փաստը, որ շատ դեպքերում, (ինչպես ցույց կտրվի ներքևում) փոխակերպվող դարձվածքը ստանում է ոչ միայն ոճական, այլ նաև լրացուցիչ իմաստային երանգավորում:

Դիպվածային փոխակերպումները ունեն ևս մի մեծ նշանակություն: Նրանք նպաստում են դարձվածքների պատկերների վերակենդանացմանը: Հայտնի է, որ ֆրանսերենի, ինչպես նաև ցանկացած այլ լեզվի, դարձվածքների մեծամասնությունը պատկերավոր հիմք ունեն: Սակայն դարձվածքի պատկերը ժամանակի ընթացքում, նրա մշտական գործածության հետևանքով մթազնում է, մաշվում, որի պատճառով էլ զգալիորեն նվազում է դարձվածքի հուզաարտահայտչական, ոճական ներգործությունը: Արդյունքում, դարձվածքը զրկվում է իր ամենակարևոր գործառույթներից մեկից, քանի որ դարձվածաբանությունը, ինչպես հայտնի է, ծառայում է գերազանցապես լեզվի հուզական ոլորտին: Իսկ ահա

¹ Steu Назарян А. Г. Фразеология современного французского языка. М., 1987, с. 244:

դիպվածային փոխակերպումները նպաստում են դարձվածքի պատկերի, հետևաբար և նրա կարևորագույն գործառույթի վերակենդանացմանը:

Վերը նշվածից պարզ է դառնում, թե ինչու դիպվածային փոխակերպումները հատկապես բնորոշ են պատկերավոր դարձվածային միավորներին: Դերանք վկայում են այն մասին, որ խոսողը, այս կամ այն չափով, ըմբռնում է դարձվածային միավորի պատկերը, կամ, ծայրահեղ դեպքում, ընկալում է այդ միավորը որպես որոշակի վերլուծական կազմավորում, որը հարաբերակցելի է իր ազատ շարահյուսական լծորդակցին: Բացի այդ, քանի որ պատկերավոր դարձվածային միավորների ներքին ձևը, շնորհիվ նրանց բաղադրիչների միջև ժամանակակից շարահյուսական հարաբերությունների, պարզ է, հիշյալ միավորների կապն իրենց նախատիպերի հետ հատկապես զգալի է այդ տիպի դարձվածքների դիպվածային փոխակերպումների դեպքում: Այս փաստը թույլ է տալիս խոսել դարձվածքի բաղադրիչի և (նույն ձևով հնչող) ազատ կապակցության բառի իմաստային հարաբերակցության մասին:¹

Հարկ է նշել, որ դիպվածային փոխակերպումների տարբեր տեսակների մոտ բարդության աստիճանը տարբեր է: Դրանցից ամենապարզերը պայմանավորված են բացարձակապես կառուցվածքային գործոններով, սակայն որքան աճում է բարդության աստիճանը, այնքան ավելանում են իմաստային գործոնները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է դարձվածային միավորի դիպվածային փոխակերպման ոճական ու իմաստային ներգործության ավելացմանը:

Ըստ բարդության աստիճանի ֆրանսերենում տարբերում են դարձվածքների դիպվածային փոխակերպումների հետևյալ տեսակները.

1. Դարձվածային միավորի բաղադրիչների դրափոխություն, որը համարվում է դիպվածային փոխակերպման ամենապարզ տեսակը և, որի ոճական ներգործությունը նվազագույնն է²: Հմմտ.

¹ Sbu Жуков В. П. О смысловом центре фразеологизмов. Проблемы фразеологии. М.-Л., 1964, с. 141:

² Մենք ելնում ենք նրանից, որ դարձվածային միավորի իմաստակառուցվածքային յուրաքանչյուր շեղումը իր նորմատիվ ձևից, այս կամ այն չափով անդրադառնում է այդ միավորի ոճական (այդ թվում հարանշանակային) և/կամ իմաստային հայեցակերպին (առաքելտին):

(Mme Vauquer): —... Je ne suis pas à plaindre, j'ai sur la planche du pain cuit pour longtemps (Balzac, *Le père Goriot*).

Այս մեջբերման մեջ գործածվող դարձվածքի նորմատիվ ձևն է՝ avoir du pain cuit sur la planche «ունևոր ապրել»:

2. Դարձվածային միավորի բաղադրիչների մեջ «օտար», այսինքն՝ ազատ բառերի ու բառակապակցությունների ներմուծում (տերմինը Ա. Վ. Կունինին է): Դեռևս Շ. Բալլին էր մշում, որ «դարձվածային կապակցության տարրերը կարող են առանձնացվել իրարից նախադասության այլ բառերով, որից, սակայն, կապակցության միասնությունն ամենևին չի խախտվում»¹: Ասվածին պետք է ավելացնել, որ դարձվածային միավորի բաղադրիչները կարող են առանձնացվել իրարից ոչ միայն բառով ու բառակապակցությունով, այլ նաև դարձվածքի միջոցով: Հմմտ.

A certains moments, cette pensée me soutient. A d'autres, suis obligé de me battre lamentablement les flancs pour y trouver un brin de consolation ... (R. Martin du Gard, *Les Thibault*).

Le défenseur de Roubaud ... tira tout le parti qu'il put de sa mauvaise cause (Zola, *La Bête humaine*).

Maintenant, il (*Lablé*) connaissait si bien le journal qu'il savait à quelle rubrique trouver à coup presque sur les mots dont il avait besoin (G. Simenon, *Les fantômes du chapelier*).

Elle (*Mme Brigitte*) s'abaissa jusqu'à lui faire, en ma présence, amende honorable (F. Mauriac, *La Pharisienne*).

Le feu venait de s'éteindre que déjà le froid envahissait la pièce et le chapelier se rendait à peine compte qu'il allait de long en large, les mains dans les poches (G. Simenon, *Les fantômes du chapelier*).

Դժվար չէ նկատել, որ բերված բոլոր օրինակներում դարձվածքների բաղադրիչների և ներմուծված բառերի կամ բառակապակցությունների միջև գոյություն ունի լրացական կապ, այսինքն՝ «շարահյուսական կապի առավել ա-

¹ Сбу Балли Ш. Французская стилистика. М., 1961, стр. 99.

գատ տեսակ, երբ բառերը նախադասության մեջ ներմուծվում են որպես ինքնուրույն շարահյուսական միավորներ»:¹ Նման ինքնուրույնության ձևական հատկանիշը հանդիսանում է ներմուծվող բառերի ու բառակապակցությունների տվյալ դարձվածքից դուրս տեղափոխելու հնարավորությունը՝ առաջադաս կամ հետադաս դիրքում՝ առանց նախադասության իմաստի խախտման:

3. Դարձվածային միավորի գեղչումը, որը հանգեցնում է նրա դիպվածային տարբերակի առաջացմանը: Առավել հաճախ գեղչվում են դարձվածքի վերջնատարրերը: Հմմտ.

... a travers le battant, la voix de Colombin: «Qui est là ?». Leroy hésita, puis dit avec un grand naturel: «C'est l'ami Leroy». Une chaîne sauta, la porte s'ouvrit «Leroy? Quel bon vent» (L. Aragon, *Les beaux quartiers*).

C'est un sale temps, dit Maillard, il pleut comme une vache. Quelle nuit! (M. Aymé, *Soties de la ville et des champs*).

Այս մեջբերումներում գործածված դարձվածային միավորների նորմատիվ ձևերն են *Quel bon vent vous amène?* «Ո՞ր քամին քեզ այստեղ բերեց» և *Il pleut comme (une) vache qui pisse* (խսկց.) «Անծրեղ հորդառատ թափվում է»:

4. Դարձվածքի անվանական բաղադրիչի քանակական (ոչ նորմատիվ) փոփոխությունը: Հմմտ.

—... il y a des anguilles sous roche, ajouta-t-il (*Grandet*) en remuant sa loupe. Je veux me mettre dans la rente (*Balzac, Eugénie Grandet*).

Il (*Daniel*) franchit l'espace éclairé et se tapit dans l'ombre; le grand mur d'une usine se dressait à sa gauche; il y appuya le dos et ferma les yeux (R. Martin du Gard, *Les Thibault*).

Այս մեջբերումներում գործածված դարձվածային միավորների նորմատիվ ձևերն են՝ *il y a anguille sous roche* «այստեղ ինչ-որ բան կարգին չէ, այստեղ ինչ-որ կասկածելի բան կա» և *fermer l'œil* «քուն մտնել, քնել»:

5. Դարձվածային միավորի մակբայական կամ ածականական բաղադրիչի համեմատության աստիճանների փոփոխում: Հմմտ.

¹ Sbu Ахманова О. С. Словарь лингвистических терминов, стр. 398.

... Christophe voyait plus clair dans leur amour qu'elle (*Jacqueline*) n'y voyait elle-même (R. Rolland, *Jean-Christophe*).

Le père Dubaton.—... Nous (*les religieux*) sommes le vide-ordures de l'humanité et nous en savons finalement plus long que les pires fétards (J. Anouilh, *Ornifle ou le courant d'air*).

Gérard en a plus qu'assez ... de cet homme de barre d'occasion. Il ne le laisse pas voir (G. Arnaud, *Le salaire de la peur*).

6. Դարձվածային միավորի մասնատում (*парцелляция*), երբ նրա բաղադրիչները ցրվում են տարբեր, բայց, առավել հաճախ, հարևան նախադասություններում, կամ էլ միևնույն նախադասության տարբեր հատվածներում: Հմմտ.— Surtout, Bette, pas un mot à Hector. Va-t-il bien?

— Oh! comme le Pont-Neuf (Balzac, *La cousine Bette*).

Quelle peut être la signification de la vie? Moi-même, en ruminant mon passé, je me surprends souvent à me demander: «A quoi ça rime?». A rien (R. Martin du Gard, *Les Thibault*).

Quand Paris se sent morveux, c'est la France toute entière qui se mouche (M. Aymé, *Silhouette du scandale*).

Վերջին օրինակում գործածվել է *Qui se sent morveux, se mouche* «գող մարդը դեմքի գույնից է ճանաչվում, գող՝ սիրտը դող» առածային դարձվածքը. որտեղ երկու բայերն էլ վերաբերում են նույն ենթակային: Սակայն դիպվածային փոխակերպման հետևանքով (նրա մասնատման միջոցով) այդ բայերը ստանում են տարբեր ենթականեր:

7. Դարձվածային միավորի (ավելի հաճախ վերջին) բաղադրիչի կրկնություն, որը նպաստում է նրա հուզարտահայտչականության սաստկացմանը: Հմմտ.

— ... Quand j'ai vu cela, j'ai pleuré, pleuré comme une Madeleine (R. Rolland, *Jean-Christophe*).

... Ce qui n'est pas honnête, monsieur, c'est de laisser monter ses filles en graine, oui en graine, tel était votre rêve peut-être ! (Zola, *Pot-Bouille*)

Il (Antoine) pivota sur lui-même, s'écroula dans un fauteuil, et, pressant

son front entre ses mains, éclata en sanglots. Il en avait assez, assez ... (R. Martin du Gard, *Les Thibault*).

Դարձվածային միավորի նման դիպվածային փոխակերպման մասնակի դեպք է նրա բաղադրիչի կրկնությունը երկու տարբերակով:

Ce jour-là, de grand matin, un petit vieillard de la tribu d'Israël, sec, maigre comme un hareng saur ... s'en revenait tranquillement du Dagsberg à Saverne (Erckmann-Chatrian, *Maître Daniel Rock*).

—Laide sorcière, meurs et crève comme une chienne. Jetez-la au feu, messieurs les juges (Ch. de Coster, *La légende d'Ulenspiegel*).

Առաջին օրինակում գործածվել են *sec/maigre comme un hareng saur* «տառեխի պես նիհար» դարձվածքի ածականական բաղադրիչի տարբերակները, իսկ երկրորդում՝ *mourir/crever comme un chien* «շան պես սատկել, մենակության մեջ մեռնել» դարձվածքի բայական բաղադրիչի տարբերակները:

8. Դարձվածային միավորի բայական բաղադրիչի կամ բաղադրիչների ձևաբանական կառուցվածքի փոփոխություն, մասնավորապես, դեմքի, թվի, ժամանակի և եղանակի կարգերում, ինչը բնորոշ է տվյալ միավորին նորմատիվ գործածության ժամանակ: Դիպվածային փոխակերպման այս տեսակը ամենից շատ բնորոշ է առածային դարձվածքներին: Համտ.

—Qui dois-je annoncer? ...

—Dites que ce sont des gens du VI^e qui ont une communication à faire.

—Du sixième? Il n'y a pas de sixième!

On s'explique ... Elle (*la bonne*) a peur, cette fille!

—Je m'en fiche? Nous y sommes et nous y restons! déclare Trinquet (J. Vallès, *L'insurgé*).

Tous, en effet, éprouvaient le pressant besoin d'en finir (*avec la brouille entre les époux Vabre*). Il fallait que le malheur, au mois, fût bon à quelque chose (Zola, *Pot-Bouille*).

Առաջին մեջբերման մեջ դիպվածային փոխակերպման է ենթարկվել *j'y suis, j'y reste* «քանի որ ես այստեղ եմ, այստեղ էլ կմնամ» (արտահայտում է

վճռականություն՝ գրաված դիրքերը չզիջելու) դարձվածքը, որը նորմատիվ ձևում գործածվում է միայն եզակի թվի առաջին դեմքում: Երկրորդ մեջբերման մեջ իրացվում է *A quelque chose malheur est bon* «չկա չարիք առանց բարիքի» առածային դարձվածքը, սակայն բայը դրված է ուրիշ ժամանակով ու եղանակով: Բացի այդ, այստեղ կիրառված է դիպվածային փոխակերպման երկու՝ այլ տեսակ բառակապակցության բաղադրիչների դրափոխություն և նրանց միջև «ծայրահեղ դեպքում» եղանակավորող դարձվածքի ներմուծում, ինչը ավելի է սաստկացնում դարձվածքի ոճական ներգործությունը, քանի որ, ինչքան շատ են լինում դիպվածային փոխակերպումների դեպքերը միևնույն դարձվածքի գործածության ժամանակ խոսքում, այնքան այդ փոխակերպումների ոճական-արտահայտչական ներգործությունը ավելի մեծ է լինում:

9. Դարձվածային միավորի գործածումը ժխտական կամ (ավելի հազվադեպ) հաստատական ձևով, որը հատուկ չէ նրա նորմատիվ, սովորական ձևին: Դիպվածային փոխակերպման այս տեսակը նույնպես բնորոշ է ավելի շատ առածային դարձվածքներին: Զմմտ.

Vouloir n'est pas pouvoir ... Un bon séjour à l'hôtel n'a jamais intégré personne. Or, c'est toute la question et nos amis ne montrent pas à cet égard de facilité (H. Bazin, *Les bienheureux de la désolation*).

Je suis fidèle en un sens. Un clou ne chasse pas l'autre. Je pourrais retrouver intact mon sentiment pour Jean (B. et F. Groult, *Journal à quatre mains*).

Tout l'escadron s'arrête, un pied en l'air. L'habit fait toujours le moine, quoi qu'on dise. Sans ma belle pelure, ils décamperaient tous dans la colline (J. Giono, *Un des Baumugnes*).

Տվյալ դարձվածային միավորների սովորական ձևերն են՝ *Vouloir c'est pouvoir* «ուզենալը կարենալ է», *Un clou chasse l'autre* «սեպը սեպով են հանում» և *L'habit ne fait pas le moine* «ամեն սև հագնող տերտեր չէ»:

10. Բայական դարձվածային միավորների բաղադրիչների ենթակա-լրացում հարաբերությունների փոփոխություն: Զմմտ.

—Je voudrait tout de même que vous m'écriviez une lettre comme quoi, étant sain d'esprit, vous me léguez librement votre fortune ... au cas où le pot aux roses serait découvert (F. Mauriac, *Le noeu de vipères*).

Այս օրինակում բերված դարձվածային միավորի նորմատիվ ձևն է՝ découvrir le pot aux roses «զաղտնիքը բացել, բացահայտել»:

11. Դարձվածային միավորի որոշչային գործառույթ կատարող բաղադրիչի առանձնացումը ստորոգելիի դերում: Հմմտ.

Jacques refusa d'un signe de tête ... Son visage était de bois (R. Martin du Gard, *Les Thibault*).

Այս մեջբերման մեջ գործածված դարձվածային միավորի նորմատիվ ձևն է՝ *visage de bois* «անխոռվ, անտարբեր դեմք»:

12. Դարձվածային (ավելի հաճախ) գոյականական բաղադրիչի կրկնաբանությունը ցուցական, ստացական, մակբայական դերանունների միջոցով: Հմմտ. Il (Goriot) n'a que ça à faire, dit Bianchon à Rastignac; je lui ai pris la tête: il n'y a qu'une bosse, celle de la paternité, ce sera un père éternel (Balzac, *Le père Goriot*).

Փոխակերպված դարձվածային միավորի նորմատիվ ձևն է՝ *avoir la bosse de ...* «բացառիկ ընդունակություններ ունենալ, հակված լինել ...»:

Դերանունը, որի միջոցով կատարվում է կրկնաբանությունը, առավել հաճախ անջատվում է իրեն նախորդող հարաբերյալից այլ փոփոխում (ազատ) բառերով, բառակապակցություններով և, մույմիսկ, նախադասություններով: Հմմտ.

—... Nous acceptons tout ça comme des mesures exceptionnelles. On se persuade qu'elles sont nécessitées par les circonstances. En fait, ce sont les prodromes de l'asservissement total. Une fois le joug bien assujetti, on ne le secouera plus! (R. Martin du Gard, *Les Thibault*).

—... La partie sera dure. Mais l'heure sera bientôt venue de la jouer (R. Martin du Gard, *Les Thibault*).

Un mot brutal, parfois, fait merveille, fouette la chair, fait bondir le cœur. Ceux-là sont permis aux heures de combat. Celui de Cambronne n'est-il pas sublime? Rien ne choque qui vient à temps (Maupassant, *Mots d'amour*).

Այս օրինակներում բերված դարձվածային միավորների նորմատիվ ձևե-

ըըն են *secouer le joug* «լուծը տապալել (թոթափել)», *jouer la partie* «մարտի բռնվել, մարտի մեջ մտնել, վեճի բռնվել, վեճի մեջ մտնել և այլն», *mot de Cambronne* «կոպիտ հայիոյանք»:

Ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում ֆրանսերեն լեզվին բավականին բնորոշ դարձվածային բաղադրիչների հեռավորական կրկնաբանության դեպքերը, երբ որպես դերանվան նախորդող հարաբերյալ, որի միջոցով այն իրականացվում է, հանդես է գալիս դարձվածային միավորի այն բաղադրիչը, որը գործածվել է նախորդ համատեքստում՝ ասության լկամ վերասությանին: Դմնտ. Louise (Ո son fils Octave) . — ... Avez-vous remarqué aussi quel étrange regard il avait?

... Si votre père a perdu la tête, moi j'ai la mienne sur les épaules (M. Aymé, *Clérambard*).

—... Elle (*L'Allemagne*) se targuait follement de pouvoir, en temps voulu, circonscrire le brasier, faire la part du feu!

—... et en retirer des marrons, fit Roy (R. Martin du Gard, *Les Thibault*).

Առաջին օրինակում, որտեղ դիպվածային փոխակերպման է ենթարկվել *avoir la tête sur les épaules* «ուսերին գլուխ ունենալ, խելք ունենալ» դարձվածքը, կատարվել է նշված դարձվածքին նախորդող *perdre la tête* դարձվածքի մաս կազմող *tête* բաղադրիչի կրկնաբանությունը՝ ստացական դերանվան միջոցով: Երկրորդ օրինակում նման փոխակերպման է ենթարկվել *tirer les marrons du feu* «ուրիշի համար կրակից շագանակ հանել, ուրիշի համար վտանգավոր գործ կատարել» դարձվածքը, որտեղ *en* մակբայական դերանվանը նախորդող հարաբերյալը, որի օգնությամբ կատարվում է կրկնաբանությունը, նախորդ նախադասության մեջ գործածված *faire la part du feu* «կրակի դեմն առնել, ճանապարհը փակել» դարձվածքի կազմի մեջ մտնող *feu* գոյականն է:

Այսպիսով, ինչպես երևում է բերված օրինակներից, դիպվածային փոխակերպումները հատկապես բնորոշ են բայական դարձվածային միավորներիին: Դա բացատրվում է նրանով, որ հենց նման բառաքերականական խմբին պատկանող կապակցություններում, շնորհիվ վերջիններիս իմաստակառուցվածքային առանձնահատկություններին, առավել վառ են դրսևորվում ֆրանսերենի դարձվածաբանության վերլուծական միտումները: